

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է 75 րոպե

9-10-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Պատասխանի տարբերակներում բերված բառազույգերից n° ըն է «ավելորդ»:

- Ա. անկողին-անկողնու Բ. մարդ-մարդու Գ. բարդի-բարդու
 Դ. ճրագ-ճրագու Ե. դրացի-դրացու

2. **ՄՐՅԵԼ** → **ՄՐՅՈՒՄ** = **ՄՐՅՈՒԹՅՈՒՆ** բառերի շարքը կազմված է որոշակի օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներից n° ըն չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

- Ա. ձերբակալել Բ. մեկնաբանել Գ. քվեարկել Դ. հետազոտել Ե. կրել

3. Հարևանուհին թոթի վրա գրեց **անձեռնոցիկ, խոսեյ, օրեկան, տուժվել, իրոքից, ավելնորդ, ամսեկան, փայլել, առօրեական, մենակով, մանրե** բառերը և Անիին խնդրեց օգնել իրեն, որ այդ բառերով շարադրություն գրի: Անիին նախ ուղղեց սխալները, հետո փորձեց միտք ձևակերպել: Հարևանուհու գրած բառերից քանիստ n° մ Անիին սխալ գտավ:

- Ա. 5 Բ. 6 Գ. 7 Դ. 8 Ե. 9

4. *Ինչո՞ւ վարդի հետ փուշն էլ է հանում,
 Ինչո՞ւ հավի պես հաճախ փոքրանում,
 Գերի է ընկնում փոքրիկ կրքերին,-
 Ինչո՞ւ է մարդը դառնում հիշաչար,
 Նա, որ արծվին էլ դարձրեց իր գերին:
 Ինչո՞ւ էրկնքից միշտ ընկնում է վար,
 Ու գերի մնում չնչին կրքերին:*

Պատասխանի տարբերակներում բերված բառերից n° ըն իր «ընկերը» չունի Հ. Շիրազի բերված տողերում:

- Ա. տատասկ Բ. չնչին Գ. ոխակալ Դ. ցած Ե. վարձու

5. **ԵՐԱՆ** բառի վերջում ավելացնելով պատասխանի տարբերակների տառերից մեկը՝ կստանաս նոր բառ: Այդ նույն տառն ավելացնելով **ԵՐԱՆ** բառի սկզբում՝ կստանաս ևս մի նոր բառ: Ո՞րն է այդ տառը:

- Ա. ք Բ. մ Գ. ի Դ. գ Ե. կ

6. Ո՞րը **ձեռք(ը) մեկնել** դարձվածքի բացատրությունն չէ:

- Ա. բռնել, ձեռքի մեջ առնել Բ. օգնել Գ. օգնություն խնդրել
 Դ. դիպչել, ձեռք տալ Ե. մի բան ցույց տալ

7. Պատասխանի տարբերակներից n° ը բառը պետք է գրել  -ի փոխարեն, որ **մուկը** «դառնա» **փիղ**:

մուկ - մուր - հուր -  - հող - փող - փիղ

- Ա. հուն Բ. հոն Գ. մաղ Դ. հոր Ե. հոս

8. Պատասխանի տարբերակներում տրված բառերից n° ը պետք է տեղադրել  -ի փոխարեն, որ ստացվի իմաստով իրարից բոլորովին տարբեր երկու նախադասություն:

 **միրգ չկա, գնանք**:

Գնանք , **միրգ չկա**:

- Ա. ծառին Բ. վրան Գ. գետափին Դ. գյուղում Ե. ձեռքիս

9. **Ժխոր, թամբ, դեղ, թախտ, պայտ** բառաշարքի բառերից չորսը ենթարկվում են որոշակի օրինաչափության: Ո՞ր բառը չի ենթարկվում այդ օրինաչափությանը:

- Ա. Ժխորը Բ. թամբը Գ. դեղը Դ. թախտը Ե. պայտը

10. Պատասխանի տարբերակների բառերից չորսը երկու «երես ունեն»: Ո՞ր բառը երկու «երես չունի»:

- Ա. դերեր Բ. լարեր Գ. գրեր Դ. ստեր Ե. վազեր

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Ամենաշատը քանի՞ բառ «կքամվի» **ենթավերնագիր** բառից, առանց տառերի տեղերը փոխելու:

- Ա. 5 Բ. 6 Գ. 7 Դ. 8 Ե. 9

12. **ահ - օղ**

- օղի - արու**
սպագա - նապաստակ
չեչեներեն - պայմանական
հավատարմություն - հասարակական
ուսումնափորձնական - 

Պատասխանի տարբերակներում բերված բառերից n° ը պետք է դնել  -ի փոխարեն:

- Ա. խոհարարական Բ. մեքենաշինական Գ. ուսանողական
 Դ. վարսավիրանոց Ե. հեղափոխական

13. Պատասխանի տարբերակներում բերված նախադասություններում ստորակետը կարելի է դնել այնպես, որ ստացվեն երկու տարբեր նախադասություններ: Տարբերակներից որո՞ւմ կստացվեն իմաստով իրարից տարբեր, բայց իրար չհակասող նախադասություններ:

- Ա. Ներել չի կարելի սպանել: Բ. Սովորի՛ր ընկերոջդ պես անգետ մի՛ մնա:
 Գ. Մտածել բարի գործեր կատարել: Դ. Լռել պետք չէ խոսել:
 Ե. Գիրք կարդա՛ մեզ պես անգրագետ չմեծանաս:

14. **Երեկոյան Ջարուհին որոշեց պատրաստել ոսպով սպաս**: Ո՞ր առակագիրն էր «հյուր գալու» Ջարուհուն: Պատասխանը թաքնված է նախադասության մեջ:

- Ա. Գոշ Բ. Այգեկցի Գ. Խնկո Ապեր Դ. Կոիլով Ե. Եզոպոս

15. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:

- Ա. երեսից որ ճանճ ընկնի, հազար կտոր կդառնա - ժլատ մարդու մասին է
- Բ. երեսը բրդի ջրով լվանալ - ամոթի զգացումը կորցնել
- Գ. թոզը երկինք հանել - խիստ քննադատել, պատժել
- Դ. լեղակ ծախող - միշտ նոթերը կիտած, տրամադրությունն ընկած
- Ե. կապույտ արյուն - ազնվական, արիստոկրատական ծագում ունեցող

16. Միծրուն ծովակի ափին նա անդադրում մտնում էր ջուրը, դուրս գալիս, ցամքոցով սրբում ջրի կաթիլները, շինծու ժպիտով ու քաղքենու պանվածքով գրավում բոլորի ուշադրությունը: Պատասխանի տարբերակների տառերից ո՞րն է «անհետացել» բերված նախադասության 4 բառերից:

- Ա. ու Բ. ի Գ. ա Դ. ե Ե. ը

17. Կենդանիների ո՞ր եռյակը պետք է տեղադրել «...ը որ ...ի առաջն ընկնի, ...ը կտանի» առածում՝ այն ամբողջացնելու համար:

- Ա. եղնիկ, իշայծյամ, արջ Բ. խոճկոր, ուլ, ոզնի Գ. հորթ, կով, գայլ
- Դ. շուն, կատու, աղվես Ե. ձի, քոթոթ, գայլ

18. Նշենի, նշելի, նշում, նշույլ, նշույթ, նշուտ, նշավակ, նշանակ, նշակաթ, նշահամ, նշաձող, նշաձև, նշայուղ, նշատերև, նշագեղ, նշագիծ, գետնանուշ, մեղրանուշ, քաղցրանուշ բերված բառերից քանի՞ սը նուշ բառի հետ «չի առնչվում»:

- Ա. ինը Բ. տասը Գ. տասնմեկ Դ. տասներկու Ե. տասներեք

19. Պատասխանի տարբերակներից ո՞րն է գաղտնագրված նկարելուկով:

401 4091 7

- Ա. Նա ասում է: Բ. Ես գնում եմ: Գ. Նա տղա է: Դ. Իմ տունն է: Ե. Ինձ համար է:

20. Մարգարիտը արագորեն վերցրեց իրերը: Այս նախադասության մեջ «թաքնվել» է Մարգարիտի պայուսակի գույնը: Ո՞րն է այդ գույնը:

- Ա. կանաչ Բ. կապույտ Գ. կարմիր Դ. դեղին Ե. ճերմակ

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Մի եզ ունեն,

Մինչև պոչը չկտրեն,

Գում չի մտնի: (ժողովրդական հանելուկ)

- Ա. խաղողը Բ. պոչատ աղվեսը Գ. անպոչ գդալը
- Դ. գոմեշը Ե. գետը

22. Նարինջ, անուրջ, մարջան, դաջվածք, էջանիշ, 🐛 : Բերված բառաշարքը կազմված է որոշակի օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներից ո՞րը պետք է լինի մեղվիկի փոխարեն:

- Ա. անջրդի Բ. արջորս Գ. քուրջ Դ. ջնարակ Ե. անջատիչ

23. Ուսուցիչը հանձնարարեց նույն եղանակով կրճատել դատարան, գավազան, հարկատու, պահարան, համարիչ, երկնագույն, դազանակ բառերից յուրաքանչյուրն այնպես, որ նոր բառ ստացվի: Ո՞ր բառն ուսուցչի հանձնարարած եղանակով կրճատելու դեպքում նոր բառ չենք ստանա:

- Ա. դատարան Բ. համարիչ Գ. երկնագույն
- Դ. գավազան Ե. հարկատու

24. Ընծաները երգի տեսքով կլինեն և արձագանք կհոդունեն բոլորիս սրտերում, ապա ինքներս մի քանի պարի շարժումներ կսովորենք: Նախադասության մեջ կան այս կամ այն կերպ «ծպված» տարբեր գործողություններ, որոնք իդձ կամ երազանք են արտահայտում: Առավելագույնը քանի՞ սն են դրանք:

- Ա. 7 Բ. 9 Գ. 10 Դ. 11 Ե. 12

25. Ո՞ր տառակապակցությունը պետք է գրել մեղվիկի փոխարեն:

ԲՇԾԵ, ՑՈԿԶ, ՈԻՉՀԷ, ՓՂԸԸ, 🐛

- Ա. քՁՂԹ Բ. ՏՆԽԳ Գ. ՍՍԻԲ Դ. քՂԸՍ Ե. ՌՃԺԱ

26. Պարտեզի տանձի ծառի տակ անադմուկ նստել էին խոզապահ Թաթույր, հավաքարար Նախշունը, Վարագդատը և Մարջանը: Ամենաշատը քանի՞ տարբեր կենդանիներ ու թռչուններ կան այս պարտեզում՝ ըստ տրված նախադասության:

- Ա. 7 Բ. 8 Գ. 10 Դ. 11 Ե. 12

27. Ածուխ, աթոռ, ազահ, ավագ, ավար, գանձ, գդակ բառերը, բացի մեկից, ենթարկվում են երկու օրինաչափության. 1. գրկվելով որևէ տառից՝ կազմում են նոր բառեր, 2. նույն սկզբունքով ստանալով միևնույն տառը՝ նորից կազմում են նոր բառեր: Պատասխանի տարբերակներում բերված բառերից ո՞րը չի ենթարկվում օրինաչափություններից մեկին:

- Ա. ավար Բ. ազահ Գ. գանձ Դ. ածուխ Ե. գդակ





28. Արարատի երկնամուխ գագաթը պատված էր ձյունի պես ճերմակ մեզով: Դաշտի անտրրը մակերևույթը տարուբերվում էր հիասքանչ պեկոծությամբ: Պատասխանի տարբերակներից որի՞ «ընկերոջը» չեն հանդիպի բերված հատվածում:

- Ա. երկնասույգ Բ. անվրդով Գ. պլեբախում Դ. ծածանվել Ե. խորամուխ

29. Պատասխանի տարբերակներում գրված բառերից չորսը որոշակի օրինաչափությամբ կապ ունեն օդապարուկ բառի հետ: Ո՞ր բառն այդ օրինաչափությանը չի համապատասխանում:

- Ա. նկարելուկ Բ. օրապահիկ Գ. գլուխկոտրուկ
- Դ. արդարություն Ե. ցատկապարան

30. Ընկերներով խաղում էինք մեր հորինած «Տեղդ իմացի՛ր» խաղը: Բոլորի ներկայացրած քարտերում ամեն ինչ ճիշտ էր բացի մեկից: Ո՞րն էր սխալ լրացված քարտը:

Ա. 	Բ. 	Գ. 	Դ. 	Ե. 
--	--	--	--	--